

5089



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան



« 06 » 05 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 056 - 24

Ձեռնարկողը՝

«Արմվահշին» ՍՊԸ
Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնք, Նոր Հաճրն
բնակավայրի Չարենցի փողոց, 19 շենք, 20 բնակարան

Գործունեությունը

Նոր Հաճրն համայնքի Նոր Հաճրն բնակավայրի
Ս. Զուլֆյան 2-րդ թաղամաս 1-ին փողոց 14
հասցեում նախատեսվող բնակելի համալիրի կառուցում
Կոտայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի՝



Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

չորրորդական լավային հոսքերով: Այս ապարների արտաքին շերտերը հիմնականում ծածկված են էյուվիալ-դեյուվիալ-պրոյուվիալ ծագման նստվածքներով:

Շրջանը գտնվում է «ցուրտ» կլիմայական շրջանում: Ունի ցուրտ ձմեռով և զով ամառով կլիմա:

Տարածաշրջանում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա, քանի որ հրաբխածին կազմավորումները բնութագրվում են ճեղքավորվածությամբ: Ուսումնասիրվող տարածքում լայն տարածում ունեն պալեոգենի ապարների հետ կապված ստորերկրյա ջրերը, որոնք պատկանում են ճեղքային ջրերի տարատեսակներին, սակայն գտնվում են խորը հորիզոններում: Ստորերկրյա ջրերի սնուցումը կատարվում է հալոցքային և մթնոլորտային տեղումների ջրերի ներծծման հաշվին, որոնք բեռնաթափվում են Հրազդան գետը: Գրունտային ջրերի հորիզոններ՝ ըստ փորված հորատանցքերի չեն հայտնաբերվել: Վտանգավոր երևույթներն ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն՝ ուսումնասիրվող տարածքում բացակայում են:

Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ 20.04.2020թ.-ի, տեղազննվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ Գրունտների $A_{max}=0,4g$ արագացմամբ:

Տարածքում գոյություն ունեն կառույցներ՝ պահակատուն, ծածկ, պարիսպ: Էսքիզային նախագծով նախատեսվում է գոյություն ունեցող կառույցներն ապամոնտաժել և տեղում կառուցել բազմաբնակարան բնակելի համալիր: Համալիրը բաղկացած է հյուսիս-հարավ ուղղությամբ տեղադրված երեք բնակելի մասնաշենքերից և օժանդակ մասնաշենքից: Եզրային մասնաշենքերը նախատեսվում են յոթ վերգետնյա հարկով, իսկ կենտրոնական մասնաշենքը՝ ութ վերգետնյա հարկով: Բոլոր մասնաշենքերում նախատեսվում են ստորգետնյա հարկեր՝ 78 ավտոկայանատեղիներով: Նկուղային հարկերում նախատեսվում են նաև տեխնիկական տարածքներ՝ ինժինեռական ենթակառուցվածքների և, որպես ապաստարան շահագործման դեպքում, անհրաժեշտ օժանդակ սենքերի համար:

Կառուցվող համալիրի վերգետնյա հարկերը նախատեսված են բնակելի՝ տիպային հատակագծային լուծումներով: Տանիքը նախատեսվում է հարթ՝ ներքին կազմակերպված ջրահեռացմամբ:

Օժանդակ մասնաշենքում նախատեսվում են լողավազան, հանդերձարաններ, ցնցուղարաններ և լողավազանի սպասարկման համար անհրաժեշտ տեխնիկական տարածքներ: Տանիքը նախատեսվում է երկթեք՝ կազմակերպված արտաքին ջրահեռացմամբ:

Բակային տարածքում նախատեսվում է բարեկարգում, կանաչապատում, պարիսպների իրականացում: Հողատարածքի սահմաններում նախատեսված է նկուղային հարկերի մուտքի կազմակերպումը, հրշեջ մեքենայի մուտեցման և շրջանցման ճանապարհի համար մասնակի նախատեսվում է գեոցանց: Հարևան հողատարածքներից և գոյություն ունեցող կառույցներից հեռավորությունները նախատեսված են նորմատիվային պահանջներին համապատասխան:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար ձեռնարկվել են համապատասխան սալիկապատված հարթ և թեք ճանապարհներ՝ դեպի բնակելի և հասարակական տարածքներ:

Նախատեսվող գործունեության տարածքում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բույսեր և կենդանիներ բացակայում են:

Հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- Հողամասի մակերես՝ 6200.5 քմ,
- Կառուցապատման մակերես՝ 2262.7 քմ- 36.5%,
- Կանաչապատման մակերես՝ 2562.3 քմ – 41.3 %,
- Անջրանցիկ մակերես՝ 1375.5 քմ – 22.2 %,
- Կառուցապատման ընդհանուր մակերես՝ 18173քմ
- Բնակարանների քանակը՝ 95,



Ավտոկայանատեղերի քանակը՝ 78:

Նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում:

Բնակելի շենքի խոհանոցներից, սանհանգույցներից և լողասենյակներից օդափոխությունը նախատեսվում է բնական՝ օդատարերով, որոնք բարձրանում են հորանի մեջ:

Օդատարերի վրա յուրաքանչյուր հարկի առաստաղի տակ նախատեսված է կարգավորիչ ճաղավանդակ:

Ստորգետնյա ավտոկայանատեղին ունի երկակի նշանակություն, որն անհրաժեշտության դեպքում կարող է ծառայել որպես պարզագույն թաքստոց: Այս հարկում նախատեսված է իրականացնել սանհանգույցներ պատսպարանից օգտվողների համար, այդ թվում նաև մեկ սանհանգույց՝ սահմանափակ կարողությամբ մարդկանց համար: Տվյալ տարածքն ապահովված է օդափոխությամբ և վթարային լուսավորությամբ:

Ավտոկայանատեղում նախագծված են մեխանիկական դրդմամբ ներածման և արտածման օդափոխության համակարգեր: Ներածման և արտածման համակարգերի սարքավորումները տեղադրված են հարկի առաստաղի տակ:

Աստիճանավանդակներում նախատեսված է տեղադրել հրակայուն դռներ:

Շեղեղատար համակարգի խողովակները նախատեսվում է անցկացնել ընդհանուր օգտագործման միջանցքներով:

Համալիրի էներգաարդյունավետությունը նախատեսվում է համապատասխանեցնել Կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի № 426-Ն որոշմամբ սահմանված չափորոշիչներին, ինչի ուղղությամբ իրականացվելու են համալիր միջոցառումներ, որոնց թվում են երեսպատման համակարգը, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհաններն ու վիտրաժները, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացումը:

Ջերմության խնայողության համար նախատեսված են ջերմաօգտահանիչներով օդի ներմուծման համակարգեր, որոնք ապահովում են ջերմության բարձր խնայողություն:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է համայնքի հետ համաձայնեցված:

Նախատեսված է շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր:

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են փորման, բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման, բետոնային աշխատանքների հետ:

Նախատեսված են իրականացնել հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերն ուղղորդել պարզարան,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումն իրականացնել փակ ծածկով մեքենաներով,
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,
- շինարարական նյութերը տեղադրել բետոնապատ մակերեսի վրա,



- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- աղմուկի մակարդակը նվազեցնելու համար շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական գործընթացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավվի ժամանակակից տեխնիկական միջոցներ:
- շինարարական աշխատանքներում ներգրավել աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող ժամանակակից տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում,

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- մինչ աշխատանքների սկիզբը՝ բոլոր աշխատողներն, այդ թվում նաև վարորդներն, անցնում են հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումն իրականացնում է աշխատանքների ղեկավարը,
- հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում հրշեջ հիդրանտի տեղադրում,
- մինչև շինաշխատանքների սկիզբը՝ շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկներով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում,
- անվտանգության նկատառումներից ելնելով՝ շինհրապարակում կտեղադրվեն կողմնակի անձանց մուտքն արգելող նշաններ, և շինհրապարակը կապահովվի լուսավորությամբ,
- հեղուկ նյութերի տեղափոխում շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահում հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

Բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ ամիսը մեկ անգամ հաճախականությամբ:
2. Փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ:
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
5. Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար, չորացած տեսակները փոխարինի նորերով:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարության ընթացքում հատկացնել 1660000 ՀՀ դրամ:

Պարճառաքանական մաս. Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնքի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը



